

## ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆԻ ՎԱՐՔԱԿԱՆՈՆԱՅԻՆ ՈՒՐՎԱՊԱՏԿԵՐԸ

### *Խաչատուր Դադայան*

Ուսումնասիրելով հայոց ազգային կապիտալի 24-դարյա վիթխարածավալ պատմությունը, հետազոտելով հարյուրավոր աղբյուրներ, ժողովելով հազարավոր էջեր աշխարհի ավելի քան 80 երկրներում հայոց առևտրատնտեսական գործունեության վերաբերյալ՝ հանգել ենք հետևյալ եզրակացությունների:

Ամեն ժողովուրդ ունի պետականակազմիչ չորս բաղադրյալ՝ ռազմական, քաղաքական, տնտեսական, հոգևոր-գիտամշակութային: Լինելով բնությունով ինքնուրույն՝ այս գործոնները միմյանց հետ փոխհարաբերվում են սերտորեն և չեն կարող գոյատևել առանց մեկմեկու: Որքան ներդաշնակ, համաչափ են զարգանում վերոհիշյալ բաղադրիչները, երկիրն այնքան քաղաքակիրթ է: Եվ, ընդհակառակն, այս կամ այն պատճառով որևէ գործոնի գերակա դիրքը հեշտությամբ կարող է բնութագրել տվյալ երկրի պետական կառուցվածքը, էությունը:

Հայերիս պարագայում առկա է առանձնահատկություն, և դրա պատճառը մեր ժողովրդի պատմական ճակատագիրն է:

Նախ, հարկ է մոտավոր պատկերացում տալ, թե ինչ ասել է «ազգային կապիտալ»: Մանկական նախապաշարմունք է այն մտայնությունը, երբ գործարարությունը շփոթում են կապիտալի հետ և հայտարարում, թե այն չի կարող ազգային լինել. գործարարությունը կապիտալ ստանալու միջոց է և, իրոք, չի կարող ազգային լինել, այնինչ կապիտալն արդյունք է, և մնում է պարզել՝ հայերիս համար այն ունեցե՞լ է, արդյոք, ազգային կիրառություն, այսինքն՝ եղե՞լ է, արդյոք, ազգային: Միանշանակ ու երիցս՝ այո՛:

Դա ակնհայտ է թեկուզ մակերեսին գտնվող ըմբռնումներից. մեր բանակն անվանում ենք ազգային, ունենք ազգային եկեղեցի, ազգային մշակույթ, ցանկանում ենք, որ իշխանությունն իր քաղաքականությունը վարի հոգուտ ազգային շահի, հապա ինչպե՞ս կարող է նույն տրամաբանական շղթայի օղակ հանդիսացող տնտեսական գործոնը՝ կապիտալը, ազգային չլինել: Այլ բան է, որ գիտական, հասարակական միտքը համեմատաբար լավ է հետազոտել հոգևոր-մշակութային, ռազմական բաղադրյալները, ՀՀ հասա-

րակությունն ուզած թե չուզած ներքաշված է քաղաքական գործընթացների մեջ, այնինչ ամենաթերուսումնասիրվածը ավանդական, ազգային տնտեսությունն է: Իսկ դա հանգեցնում է մտավոր խարխափումների, համազգային ու պետական ընդհանուր հայեցակարգ ստեղծելու անհնարինության:

Վերոշարադրյալ տեսակետներից յուրաքանչյուրն առանձին և լրջագույն խոսակցության նյութ է, ինչը, սակայն, դուրս է մեր ուսումնասիրության ծիրից: Ստորև կանդրադառնանք ազգային կապիտալի մեկ դրսևորմանը՝ հայ վաճառականի վարքականոնային առանձնահատկությանը:

Անգամ այդ մեկ դրսևորումն ըմբռնելու համար անհրաժեշտ է տալ ընդհանրական պատկերացումների նախապատրաստական համապատկերը:

Հայոց ազգային կապիտալը պատմական առանձնահատկությունների ու զարգացումների վրա հիմնված մի ամբողջականություն է, որը բաժանել ենք հետևյալ հանգրվանների.

ա. հին հայկական և միջնադարյան պետական կապիտալ (մինչև պետականության, Բագրատունյաց հարստության կորուստը),

բ. Կիլիկյան թագավորության պետական կապիտալ,

գ. Նոր Ջուղայի կապիտալ,

դ. արևմտահայ կապիտալ,

ե. ռուսահայ կապիտալ,

զ. Հայաստանի Երրորդ Հանրապետության կապիտալ:

Բացի վերջինից, որի համադրական վերլուծությունն առանձին խոսակցության նյութ է, մյուսները ձևավորել են **հայոց դասական ազգային կապիտալը**: Այն մեր ժողովրդի ճակատագրում ունեցել է երկու հիմնական, վիթխարի պատմական դերակատարություն:

**Առաջին.** Հայ ժողովրդի **ներկայանալն** աշխարհին առհասարակ կատարվել է ռազմական գործոնի շնորհիվ՝ աշխարհանված պատերազմներով ու ճակատամարտերով: Ռազմերթերի, արշավանքների ժամանակ Արմենիայի զորախմբերին ուղեկցում էր երկու դաս՝ պոռնիկների ու վաճառականների: Վերջիններս զբաղվում էին պարզ առևտրով և գորքին պարեն մատակարարելով: Երբ Արմենիան պարտություններ կրեց Հռոմից, պարթևներից, պարսիկներից, Բյուզանդիայից և այլն, ստիպված եղավ ամփոփվել իր սահմանների մեջ: Սակայն վաճառականների մոտ մնաց աշխարհագրական նոր տարածքների հուշը: Նրանք շարունակեցին իրենց խաղաղ զբաղմունքը և դառնալով յուրատեսակ միջնորդներ սեփական ժողովրդի ու այլ ազգերի միջև՝ ապրանքափոխանակության, երթևեկի հետ մեկտեղ սկսեցին փոխանակել տեղեկատվություն, աշխարհաճանաչողական պատկերացումներ, պատմամշակութային արժեքներ, լեզուներ, կենցաղավարու-

թյուն, բարքեր, սովորույթներ և այլն: Այս ամենը հայ վաճառականության **քաղաքակրթական առաքելությունն** էր, որի շնորհիվ մենք ներհյուսվեցինք աշխարհի ժողովուրդների ընտանիքին:

**Երկրորդ.** Պետականության կորստով, Անիի անկմամբ մեր ժողովուրդը ենթարկվեց առաջին **ստիպողական արտագաղթին**: Սակայն արտագաղթեց, Հայրենիքը լքեց ու սփռվեց նաև կապիտալը: Այս գործընթացն իր ողբերգական շարունակությունն ունեցավ տարածքային կորուստների, Հայաստանի մասնատման, բազմաթիվ ասպատակությունների, արհավիրքների և ավերների պատճառով: Մեր կապիտալը հայտնվեց օտարության մեջ, սկսեց արդյունաբերել արտերկրում: Սակայն կատարվեց մի զարմանալի տարափոխություն, ինչը մենք համարում ենք մեր ժողովրդի եզակիության դրսևորումներից մեկը. **հայոց ազգային կապիտալն ստանձնեց ազգապահպան անգնահատելի առաքելություն, ինչը փառք ու պատվով իրականացրեց դարեր շարունակ**: Նա՛ հանդիսացավ այն ավշաբեր, արյունատար երակը, որը սնուցեց սեփական եկեղեցին, դպրոցը (իմա՝ լեզուն), մշակույթը, որոնց շնորհիվ մեր տեսակը չանհետացավ պատմության թատերաբեմից: Նա՛ եղավ այն «ձեռքը», որը սպեղանի դրեց ջարդերից, կոտորածներից, ցեղասպաններից բզկտված մեր ժողովրդի վերքերին և բերեց-հասցրեց այս օրվան:

Ո՞վ էր այդ «ձեռքի» տերը: Երկարատև ուսումնասիրությունների, խոհերի, բազմաթիվ գործոնների հաշվառման, կշռադատումների արդյունքում անչափ կարևոր է ձևակերպել հայ կապիտալիստի հավաքական, ընդհանրական բնութագիրը, ինչը վերին աստիճանի արդիական նշանակություն ունի: Եվ այսպես, ըստ մեզ, *հայ դասական վաճառականը կրոնապաշտ էր ու եկեղեցասեր, իր շահույթից, եկամտից, կապիտալից մշտապես մասհանումներ էր կատարում ազգային կարիքների համար, որովհետև առաջնորդվելով քրիստոնեական բարոյականության արժեքներով՝ բարերարությունը համարում էր անմահության հասնելու ամենադյուրին ուղի. այդպես ձևավորեց անմահության և կապիտալի մշակույթը*:

*Առևտրում արդարամիտ էր, ազնիվ, պարկեշտ, խղճի մտք էր վերաբերվում դիմացինին, ձեռներեց էր, արտառոց աշխատասեր, դժվարություններից չվախեցող և խոսքի տեր մարդ. բանավոր խոսքը գրավոր պայմանագրի արժեք ուներ:*

*Առևտուր անելու համար գերադասում էր վիթխարի տարածքներով կայսրությունները, որովհետև մի վայրում անհաջողության մատնվելու դեպքում տեղափոխվում էր այլ բնակավայր և գործելով միևնույն պետաիրավական ոլորտում՝ կորցրածը հետ էր բերում:*

*Միաժամանակ խիստ հաշվենկատ էր ու զգուշավոր, տնից դուրս էր*

գալիս, ամիսներով ու տարիներով շրջում այն երկրներում, որտեղ արդեն կային համերկրացիներ, համաքաղաքացիներ, ազգակիցներ: Նրանց հետ համերաշխորեն, միասնաբար, ձեռք ձեռքի տված զբաղվում էր այն ապրանքատեսակների առևտրով, որոնցից գլուխ էր հանում և որոնց շահութաբերության փորձն առկա էր: Եթե անգամ համոզվեր, որ այլ երկրում այս կամ այն ապրանքատեսակի առևտուրն ավելի շահավետ էր, ապա միևնույնն է՝ աշխատում էր առաջինը չլինել, այս հարցում ևս հավատում, վստահում և ապավինում էր միայն ազգակիցներին:

Քանի որ մայրենին, մեսրոպյան այբուբենը հնչարտասանական իդեալական համակարգ, լիակատար հնարավորություններ էր ընձեռում, ապա առանց դժվարության յուրացնում էր այն օտար լեզուները, որոնք անհրաժեշտ էին իր գործունեության համար:

Կենցաղավարության մեջ պահպանողական էր, օտար երկրներում մսխող չէր, կանանց, ոգելից խմիչքների, մոլեխաղերի հանդեպ խիստ զուսպ էր, հավատարիմ էր ընտանիքին, մշտապես ձգտում էր վերադառնալ Հայրենիք և տունդարձից հետո շոայլ կերուխումներ էր սարքում:

Մրցակցելու մի անբացատրելի հակում ուներ, եթե մրցակցություն չկար՝ մի տեսակ խեղճանում էր, լճանում, այդ իսկ պատճառով ինքն էր ձգտում պայքարի մեջ մտնել: Հիմնական տնտեսական ավանդական հակառակորդները եղել են հրեաները և հույները, որոնց հետ մրցակցությունում հաղթողներ ու պարտվածներ չեն եղել:

Հայ դասական վաճառականի այս հավաքական կերպարն ստանալու համար զերծ ենք մնացել իդեալականացման մտայնությունից, հիմնվել ենք բազմահարյուր պատմագիտական փաստերի համադրման վրա, դրանցից բխեցրել օրինաչափությունները, այդ օրինաչափություններն ապացուցող բացառությունները, կատարել երևութային ամբողջացումներ և հանգել վերոշարադրյալ ուրվագրերին:

Անդրադառնալով հայ վաճառականի պրոֆեսիոնալ վարքականոնին՝ հարկ է հաշվի առնել մի քանի առանձնահատկություններ: **Վարքականոնը** ենթադրում է իրավական-կազմակերպական փաստաթուղթ, ինչը հայ վաճառականության համար գոյություն չի ունեցել (այդպիսի փաստաթղթեր առկա են եղել որոշ համայնքներում, որոշակի ժամանակահատվածներում): Դա ունի իր պարզ բացատրությունը. սփռված լինելով աշխարհով մեկ՝ հայոց ազգային կապիտալը գործել է այս կամ այն երկրի պետական, իրավական, տնտեսական իրողությունների շրջանակում, իսկ դրանց վաճառքացման դեպքում (պատերազմներ, ազգային-կրոնական ճնշումներ, բռնարարքներ, ապօրինի մրցակցություն և այլն)՝ հեռացել: Սակայն եթե տարանջատենք **վարք և կանոն** բաղադրյալները, ապա կնկատենք, որ հայ

վաճառականության համար միասնական, ամբողջական վավերագիր է հանդիսացել Աստվածաշունչը, Բարձրյալի պատվիրաններին, քրիստոնեական բարոյականության արժեքներին հավատարիմ մնալը՝ դրանցից բխող վարքագծով:

Մի կողմ թողնելով հայ վաճառականի վարք ու կանոնի անքակտելի մաս կազմող **բարեբարական գործունեությունը**, ինչն առանձին մենագրության նյութ է, փորձենք դիտարկել այլ դրսևորումներ:

Նախ, բոլոր այն երկրներում, ուր հաստատվել են հայ վաճառականները և հիմնել առևտրատնտեսական համայնքներ՝ ապագա սփյուռքահայ գաղթօջախների նախատիպերը, գործել են հավատարմորեն, ի շահ այդ երկրների բարգավաճման: Եվ պատահական չէ, որ բոլոր ժամանակներում գրեթե միաբերան անվանվել են «օգտակար տարր»<sup>1</sup>:

Հաջորդ ուշագրավ հանգամանքը հայ վաճառականի արտառոց **պարկեշտությունն** է: Դրա մասին կան բազմաթիվ վկայություններ, բայց բավարարվենք երկուսով: XIV դարից Բուկովինայում (պատմական մարզ, որն այժմ գտնվում է Ուկրաինայի ու Ռումինիայի կազմում) հաստատված և հիմնականում արևելյան ապրանքների առևտրով, անասնավաճառությամբ ու կաշեգործությամբ զբաղվող հայերն այսպիսի վարքային կանոն ունեին. միմյանց կամ այլազգիների հետ առևտրական գործարք կատարելիս մի ձեռքով ամուր սեղմում էին դիմացինի ձեռքը, մյուսով՝ խփում դրան: Այսինքն՝ գրավոր որևէ պայմանագիր չէր կնքվում, հայի բանավոր խոսքն ավելի գորեղ էր և անխախտ<sup>2</sup>:

Ծնունդով պոլսեցի, Մանչեսթրում առևտրով զբաղված, ապա Եթովպիայում հաստատված Միհրան Մուրադյանի «Գևորգ Մուրադյան» առևտրական տունը առաջնակարգներից մեկն էր և մասնաճյուղեր ուներ Եգիպտոսում, Իտալիայում, Ռումինիայում, Բուլղարիայում: 1928թ. 63-ամյա Մ.Մուրադյանը, ի հիշատակ հոր, Ադիս Աբեբայում կառուցեց Սբ Գևորգ հայոց եկեղեցին: Ո՞վ էր նրա հայրը: Գևորգ Մուրադյանը Կ.Պոլսում զբաղվում էր սպիտակեղենի առևտրով, նա մի հույն գործընկեր էր ունեցել, որը մահացել էր, բայց որին պարտք էր մնացել: Եվ ահա տարիներ անց նա գնացել էր Հունաստան, գտել գործընկերոջ ժառանգներին և պարտքը վերադարձրել տոկոսներով: Գ.Մուրադյանի մտքով իսկ չէր անցել, թե կարելի է օգտվել պատեհ հանգամանքից և առաջնորդվել այսօր լայն տարածում

<sup>1</sup> Տիպական է Եգիպտոսի ականավոր պետական գործիչ, մի քանի անգամ վարչապետ նշանակված, խոշոր կալվածատեր Նուբար Նուբարյանի (1825-1899) օրինակը: Նա ասում էր. «Եգիպտոսը երկու բանի կարիք ունի մեծ և բարգաւաճ լինելու համար՝ արդարություն եւ ջուր: Կեանքս նուիրեցի Եգիպտոսի, որովհետեւ գաղթը իմ առջիս այդ գործը հանեց: Հրապուրուեցայ անկից եւ կապուեցայ: Բայց օտար երկրի մէջ այդ գործունեութիւնս երբեք ինծի չմոռցուց, որ հայ մըն եմ» (Վ.Զարդարեան, Յիշատակարան, Գ հտ., Գահիրէ, 1934, էջ 61):

<sup>2</sup> Գ. Տան, Արևելեան Հայք ի Պուքովինա, Վիեննա, 1891, էջ 66:

ունեցող այնպիսի մի եղկելի վարվելակերպով, ինչպիսին գործընկերոջը «զցելն» է: Մեր վաճառականը կարծում էր, թե միայն ազնվությամբ, օրինավորությամբ է հնարավոր հաջողության հասնել առևտրում: Անշուշտ, նրա որդիները ժամանակի ամենահայտնի հայ գործարարներն էին, իսկ Ադիս Աբեբայի Սբ Գևորգ եկեղեցին կանգուն է մինչ օրս:

Մենք դիտավորյալ առանձնացրինք երկու փաստ, որոնց միջև ընկած է 6-դարյա ժամանակաշրջան, համադրելու և ապացուցելու համար, որ հայ վաճառականի համար տիպական էր վարքագծային այնպիսի արտահայտում, ինչպիսին էր պարկեշտությունը<sup>1</sup>:

Այժմ անդրադառնանք հայ վաճառականության վարքականոնային այն դրսևորումներին, որոնք ունեին փաստաթղթային ձևակերպումներ:

Նախ հարկ է պատասխանել մի կարևորագույն հարցի՝ ի՞նչ ասել է Մփյուռք: Մեր խորին համոզմամբ, ներկայիս սփյուռքահայ բոլոր գաղութներն ի սկզբանե եղել են հայկական առևտրատնտեսական համայնքներ: Հայ վաճառականները սովորաբար երթևեկում էին աշխարհի տարբեր երկրներում, սակայն որոշ թվաքանակ մշտական բնակություն էր հաստատում, այն հույսով, թե մի օր կվերադառնա: Նրանք մշտական կապի մեջ էին Հայրենիքի հետ և կանոնավոր կերպով ֆինանսապես ու նյութապես օժանդակում էին ոչ միայն իրենց ընտանիքներին, այլև եկեղեցուն, դպրոցին, ազգային այլ կառույցներին: Ջարդերի, կոտորածների, ցեղասպանության ենթարկվող հայն ո՞ր պիտի արտագաղթեր. այնտեղ, ուր կար բարեկեցիկ կյանքով ապրող ազգակից, հայրենակից: Չանգվածաբար արտագաղթող, դրամագլուխ չունեցող, գործարարությամբ զբաղվելու ընդունակություններից զուրկ հայությունը փոխեց առևտրատնտեսական համայնքների սոցիալական կազմը, և դրանք վերածվեցին գաղթօջախների<sup>2</sup>:

Մփյուռքի գիտականորեն ճշգրիտ և լավագույն բնորոշումը պատկանում է ակադեմիկոս Վ.Բարխուդարյանին, որը գրում է. *«Գաղութ, գաղթավայր կամ գաղթօջախ հասկացության տակ պատմագիտությունն ընդունում է օտար երկրներում հաստատված որևէ ժողովրդի այն զանգվածների գոյությունը, որոնք նոր բնակավայրում ստեղծում են իրենց համայնքը, ստանում ինքնավարություն, պահպանում մայրենի լեզուն, ազգային սովորությունները, դավանանքը, գիրն ու գրականությունը կամ ունենում նշված հատկանիշների մի մասը: Ուրիշ խոսքով, երբ այդ զանգվածները օտար միջավայրում պահպանում են ազգային նկարագիրը և իրենց հատկանիշներով ու համա-*

<sup>1</sup> Բազմաթիվ նման փաստեր բերել ենք մեր «Կրատեր» հոդվածաշարում («Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 2005թ., հուլիս-սեպտեմբեր):

<sup>2</sup> Չուր չէ, որ Մխիթարյան միաբան Ղուկաս Տերտերյանցը գրում էր. «Ազգովին վաճառականութիւնը ձեռք առինք, որն որ կրնանք ըսել, թէ ազգը պահպանեց ու բոլորովին ջնջուելէն պահեց» (Տերտերեանց, Գիտութիւն վաճառականութեան, Վիեննա, 1848):

պարփակ կյանքով առանձնանում հյուրընկալող ժողովուրդներից»<sup>1</sup>:

Ստորև կանդրադառնանք **ինքնավարություն** ունեցող գաղթավայրերի ներքին վարքականոններին: Այդպիսի ինքնավարությամբ օժտված էին, այսպես կոչված, հայաքաղաքները, այսինքն՝ հայերի հիմնած և հիմնականում հայերով բնակեցված բնակավայրերը, ինչպիսիք էին Նոր Ջուղան (Պարսկաստան), Գերլան (Ավստրո-Հունգարիա), Նոր Նախիջևանը (Ռուսաստան), Գրիգորիոպոլիսը (Բեսարաբիա): Այստեղ ևս առանձնահատկություն կա. եթե ռուսական հայաքաղաքներն ունեին այնքան ինքնավարություն, որ չէին խանգարում կայսրության շահերին, հայերի հիմնած Արմավիր հայաքաղաքն առհասարակ զուրկ էր որևէ ինքնուրույնությունից, իսկ զուտ ռուսական Աստրախանում հայ համայնքն ուներ առանձին «Դատաստանագիրք», ապա իրավիճակն այլ էր Նոր Ջուղայում ու Գերլայում:

Նոր Ջուղան բացառիկ ու եզակի երևույթ է համաշխարհային առևտրի պատմության մեջ: Օսմանյան կայսրության դեմ պատերազմող պարսից Շահ Աբաս I-ը 1603թ. կատարեց ռազմավարական չափանիշներով վիթխարի և դաժանությամբ աննկարագրելի մի քայլ: Նա բռնի հայաթափեց գրեթե ամբողջ Արևելյան Հայաստանը (ինչպես նաև Արևմտյան Հայաստանի որոշ բնակավայրեր), Պարսկաստան քշեց շուրջ 100 հազար հայ, որոնցից ողջ մնացին մոտ 30 հազարը: Նպատակը մեկն էր՝ Օսմանյան կայսրությունը թողնել մարդկային ռեսուրսներից զուրկ և մոխրակույտերի վերածված մի ամայի տարածք: Սակայն կար այլ նպատակ ևս. Շահ Աբասն ուներ հում մետաքս, որը Եվրոպայում կարող էին իրացնել քրիստոնյա և առևտրում բազմահմուտ հայ վաճառականները: Դա էր պատճառը, որ նա ավերեց հայ վաճառականության «մայրաքաղաք» Ջուղան, իսկ նրա բնակիչներին առք-փառք հասցրեց իր մայրաքաղաք Սպահան և նրա մոտ տարածք հատկացրեց: Այդպես 1605թ. հիմնվեց Նոր Ջուղան, որը, կրկնենք, բացառիկ նշանակություն ունեցավ և, առաջին հերթին, մեր ժողովրդի քաղաքակրթական զարգացման և այլ ժողովուրդների հետ ներհյուսման տեսակետից:

Նոր Ջուղան ղեկավարում էին քաղաքագլուխը (քալանթար), թաղապետերը (տասնակավագներ), դատավորը (քեթխուդա), արհեստագործների պարագլուխը (ուստաբաշի): Սակայն քաղաքի եզակիությունն այլ էր. այստեղ պատրաստում էին **պրոֆեսիոնալ** վաճառականներ, Սբ Ամենափրկիչ վանքի դպրատանը հայ պատանիներին դասավանդում էին թվաբանություն, աշխարհագրություն, առևտրի արվեստ, որից հետո նրանք սփռվում էին աշխարհով մեկ: Չուր չէ, որ նորջուղայեցի վաճառականներին կարելի էր հանդիպել Հարավային Աֆրիկայից մինչև Շվեդիա, Նիդեռլան-

<sup>1</sup>Բարխուդարյան Վ., Հայկական գաղթավայրերը (առաջացումը, նշանակությունը), «Էջեր հայ գաղթավայրերի պատմության», Ե., 1996, էջ 2:

դական Հնդկաստանից՝ Բնդունեզիայից մինչև «յենկի դունյա»՝ «յանկիների աշխարհ», այսինքն՝ Ամերիկա:

Ինչպե՞ս, ի՞նչ սկզբունքներով էին գործում նորջուղայեցիները: Քաղաքի իսկական տերերը խոջաներն էին՝ մեծահարուստ, բազմափորձ վաճառականները, որոնք արդեն շրջել էին աշխարհի տարբեր երկրներով և ունեին խոշոր դրամագլուխ: Եվ ահա առևտրական ճամփորդության մեկնելու պատրաստվող նորաթուխ վաճառականը, որը գուրկ էր դրամագլխից, դիմում էր խոջային: Վերջինս նախ ստուգում էր խնդրարկուի ով լինելը. եթե սա հակում ուներ ոգելից խմիչքների, կանանց, մոլեխաղերի հանդեպ, ապա տեղնուտեղը մերժում էր ստանում: Եթե ոչ, ապա տեղի էր ունենում հետևյալը. մի քանի հեղինակավոր վկաների ներկայությամբ պայմանագիր էր կնքվում խոջայի՝ **աղայի** և խնդրարկուի՝ **ընկերոջ** միջև: Համաձայն դրա՝ աղան կարող էր տրամադրել կամ փող, կամ ապրանք, կամ թե՛ մեկը, թե՛ մյուսը: Ընկերն իր առևտրական շրջանառության ընթացքում կարող էր գործել երկու կերպ՝ կամ աղայի ցուցումներով ու ցանկությամբ, կամ ինքնուրույն: Երկու դեպքում էլ վերադառնալուց հետո ընկերը պարտավոր էր վերադարձնել ամբողջ վարկը, շահույթի 3/4-ը՝ եթե աղայի ցուցումներով էր առևտուր արել և 2/3-ը՝ եթե գործել էր ինքնուրույնաբար: Ընկերոջ մահվան դեպքում աղան իրավունք ուներ, որպես փոխհատուցում, տնօրինել վարկառուի՝ Նոր Ջուղայում և արտասահմանում մնացած գույքը:

Մերօրյա հայացքով անմարդկային թվացող այս պայմաններն իրականում հնարավորություն էին տալիս մի կողմից՝ շրջանառության մեջ դնել խոջաների կապիտալը, մյուս կողմից՝ վարկառուն ձեռք էր բերում անհրաժեշտ փորձառություն, սեփական կապիտալ և խոջաների դասն անցնելու միջոց:

Հարց կարող է ծագել. իսկ ինչպե՞ս էր կատարվում վերահսկողությունը, չե՞ որ վարկառուի առևտրական շրջագայությունը հաճախ տևում էր տարիներ: Շատ պարզ. աղայի և ընկերոջ միջև կնքված պայմանագրի կետերից մեկն այն էր, որ վարկառուն պարտավոր էր ամեն օր գրի առնել յուրաքանչյուր առևտրական գործարք: Այդ փաստաթուղթը կոչվում էր «ռուզլամայ»<sup>1</sup>, «գիրք հաշուի»՝ հաշվեմատյան: Վերադարձից հետո ընկերը ներկայացնում էր հաշվեմատյանը, որով աղան պարզում էր հաշիվների ստուգությունը: Ծանրագույն պատիժներ էին սպասվում նրանց, ովքեր ոչ թե հաշվեմատյան չէին պահի (նման բան հնարավոր չէր, այդպիսի դեպքեր հայտնի չեն), այլ կթերանային մատյան լրացնելիս, և պատժի խստությունը կախված էր թերացումների չափից. վարկառուն կարող էր հայտնվել բանտում, կերակրվեր միայն հաց ու ջրով և պարբերաբար ծեծ ուտեր՝ մեկ տա-

<sup>1</sup> Պարսկերեն բառացի՝ օրագիր:

րի ժամանակով: Իսկ եթե թերացումներն առանձնակի խոշոր չափերի էին, վարկառուին կարող էին հանձնել պարսից իշխանություններին, իսկ դա նշանակում էր, որ ընկերը կենթարկվի սարսափելի կտտանքների կամ պարզապես կզլխատվի: (Հայտնի է մի այսպիսի դեպք. XVIIդ. նորջուղայեցի վաճառականներից մեկը Հնդկաստանից գալիս է Սբ Էջմիածին, կաթողիկոսին պատմում, որ հիվանդացել է և ի վիճակի չի եղել մեկ ամիս հաշվեմատյան լրացնել: Վեհափառը հավատում է և Նոր Ջուղայի ղեկավարներին նամակ գրում ու միջնորդում, որ վաճառականին պատժի չենթարկեն):

Ուսումնասիրելով Նոր Ջուղայի վաճառականության պատմությունը՝ կարող ենք ասել, որ հաշվեմատյաններ չպահելու դեպքերը հատուկ ենտ էին: Այդ մատյանները, որոնք այսօր վիթխարի պատմագիտական ու տնտեսագիտական արժեք ունեն, հայ վաճառականի մեջ դաստիարակում էին կարգապահություն, պատասխանատվություն, վարքագծային այնպիսի հատկություններ, ինչպիսիք էին ազնվությունը, օրինավորությունը, պարկեշտությունը: Եվ այս ամենը փոխանցվում էր սերնդեսերունդ, դարեդար<sup>1</sup>:

Ուշագրավ է նորջուղայեցի վաճառականների ճամփորդելու եղանակը, ինչը կատարվում էր հիմնականում ուղտերի քարավանով: Ապրանքափոխանակման համար 6 ուղտ վարձելու կամ գնելու դեպքում 7-րդը ձրի էր տրամադրվում, և նորջուղայեցիները դրա վրա բարձում էին անկողին, կերակուր եփելու ամաններ, սննդամթերք (պաքսիմատ, ապուխտ, յուղ, ալյուր և այլն), ինչպես նաև մրգաչիր, գինի, օղի: Վերցնում էին նաև ուռկան ու պատահած գետերից ձուկ էին որսում: Սննդի վրա փող գրեթե չէին ծախսում. եվրոպական գյուղերում վերցնում էին թարմ հաց, կարագ, կաթ, պանիր, ձու և դրանց դիմաց տալիս շաֆրան, պղպեղ, հնդկընկույզ, մուշկ և այլ համեմունքներ, իսկ Ասիայում սննդամթերքի դիմաց տալիս էին Վենետիկի, Նյուրնբերգի, Ֆրանսիայի արտադրության մանր առարկաներ՝ հայելի, մատանի, ապարանջան, կեղծ մարգարիտ, մկրատ, դանակ, ասեղ, գնդասեղ, որոնք արևելյանների համար ավելի գնահատելի էին, քան փողը: Եթե պիտի գիշերեին որևէ գյուղում կամ քաղաքում, ապա 5-6 հոգով վարձում էին մեկ սենյակ: Եվ ամենակարևորը՝ իրենց երկարատև ճամփորդության ընթացքում, ուր էլ լինեին, խստագույնս պահպանում էին եկեղեցական կարգապահությունը (ծում, պահք)<sup>2</sup>:

Այս ամենը վկայում է այն մասին, որ նորջուղայեցիներն ամենայն լրջությամբ էին վերաբերվում իրենց գործին, դրսևորում էին միասնակա-

<sup>1</sup> Ավելի մանրամասն տե՛ս «Հովհաննես Տեր-Ղավթյան Ջուղայեցու հաշվեմատյանը» (Լ.Խաչիկյանի և Հ.Փափագյանի աշխատությամբ), Ե., 1984, *Խաչիկյան Շ.*, Նոր Ջուղայի հայ վաճառականությունը և նրա առևտրատնտեսական կապերը Ռուսաստանի հետ XVII-XVIII դարերում, Ե., 1988:

<sup>2</sup> *Ալպոյաճեան Ա.*, Պատմություն հայ գաղթականության, Գ. նոր դարու սկիզբէն մինչեւ Ի դարու սկիզբը, Գահիրէ, 1961, էջ 176:

նությունն ու համերաշխություն, ժուժկալ էին, տնտեսող ու կրոնապաշտ:

Այժմ տեղափոխվենք Կենտրոնական Եվրոպա: Տրանսիլվանիայում, Մամոշ գետի արևելյան ափին, այնտեղ, ուր այժմ փոված է հունգարական Մամոշույվար քաղաքը, գտնվում էր Մարդինուց դոլակը: 1700թ. հայերի հոգևոր առաջնորդ, կաթոլիկ եպիսկոպոս Ավքսենտիոս Վզրարյանը ավստրո-հունգարական Լեոպոլդ կայսրից թույլտվություն ստացավ դոլակի շուրջ քաղաք կառուցել: Ի՞նչ գործ ունեին այդտեղ հայերը: Նրանց նախնիները անեցիներն էին, որոնք 1239թ. լքել էին իրենց քաղաքը, գաղթել Ղրիմ, զբաղվել առևտրով, ապա թուրքերի կողմից թերակղզու գրավումից հետո աստիճանաբար անցել Լեհաստան ու Մոլդովա: Ենթարկվելով կրոնական, ազգային ճնշումների՝ նրանք հեռացան Կարպատներ, ուր ստացան Տրանսիլվանիայի Միխայ Աբաֆի իշխանի աջակցությունը:

Եթե հայրենիքի գաղափարից զուրկ թափառական գնչուներն զբաղվում էին մուրացկանությամբ ու ձիագործությամբ, ապա Հայրենիքից բռնի զրկված հայերի միակ և գլխավոր զբաղմունքն առևտուրն էր՝ ինքնապահպանության լավագույն կովանը: Հենց առևտրի տեսակետից էր հարմար նոր վայրը, այստեղ կային ընդարձակ խոտհարքներ ու մարգագետիններ, հոսում էր գետը, և կարող էին ինչպես սեփական արտադրանքը, այնպես էլ արևելյան ապրանքներ վաճառել ընդհուպ մինչև Բալթիկ ծովի ափերը: Հարկ է նշել, որ նրանք ապագա քաղաքի տարածքը կայսրից **գնեցին**՝ վճարելով 12 հազար ֆլորին: Ավելին, Կարլ VI կայսրը 1737թ. 100 հազար ֆլորինի դիմաց 90 տարով քաղաքը վաճառեց հայերին, իսկ 1887-ին վերջիններս մշտնջենապես գնեցին կալվածքները:

Լեհաստանից, Մոլդովայից և այլ վայրերից Մամոշ գետի ափ գաղթեց շուրջ 3000 հայ ընտանիք, որոնք էլ կառուցեցին սիրունատես մի քաղաք և այն անվանեցին Գերլա (հին արձանագրություններում՝ Արմենոպոլիս, Արմենիենշտադտ, 1838-ից՝ Մամոշույվար): Ունենալով լայնարձակ արտատվայրեր՝ նրանք սկսեցին զբաղվել անասնապահությամբ, անասնավաճառությամբ, ձիավաճառությամբ և կաշեգործությամբ, մասնավորապես՝ պատրաստում էին սև և կարմիր ընտիր կաշի, որից երկարաճիտ կոշիկներ էին կարվում հունգարացի ազնվականների համար:

Գերլան ոչ միայն հայաքաղաք էր, այլև վաճառականական քաղաք, և զուր չէ, որ այն ղեկավարում էր **Վաճառականների եղբայրությունը**: Այդ մարմնի ժողովների արձանագրությունները 1718-1801թթ. հայերեն էին: Եղբայրության առաջին նախագահն էր Գրիգորի որդի պան Ալեքսան, անդամներ էին ևս 10 հոգի, որոնք կոչվում էին վադահներ: Քանի որ քաղաքի ամբողջ երկայնքով կար մշտապես գործող անասնավաճառանոց, ուր ամեն վաճառական ուներ իր տաղավարը, վադահները հսկողություն էին իրակա-

նացնում և առևտրի կանոնների խախտման համար պատիժներ նշանակում:

Վաճառականների եղբայրությունն առաջնորդվում և իրականացնում էր հատուկ վարքականոնային գործելակերպ, որը հիմնված էր քրիստոնեական արժեքների վրա: Դեռևս 1725թ. վաճառական Շիմայան եղբայրների կառուցած Սբ Ավետման եկեղեցում քահանան ամիսը երկու անգամ պատարագ էր մատուցում, որոնց ներկա գտնվելը պարտադիր էր: Եթե որևէ մեկն անհարգելի պատճառով բացակայում էր՝ եղբայրությունը նրան տուգանքի էր ենթարկում: Եկեղեցական տոներին առհասարակ արգելված էր առևտուրը:

Գերլայում խիստ կարգուկանոն էր սահմանված, որին ուշի-ուշով հետևում էր եղբայրությունը: Եվ խիստ հետաքրքրություն են ներկայացնում պատիժները: Այսպես, 1824թ. եղբայրությունը Հովսեփ Կաղսագոյանին տուգանեց 1 ֆիորինով՝ ապրանքը թերակշռելու համար, Թեոդորոս Հարակային 4 ֆիորինով՝ հայիոյելու համար, Լադիսլավ Ագբեյին 2 ֆիորինով՝ ծեծկոտուքի համար, Գրիգոր Մյուռոնյանը 3 ժամ փակի տակ մնաց անհնազանդության համար, Մոդոմոն Մորուշանից թերակշռված ապրանքը վերցվեց ու բաժանվեց չունևորներին, բացի այդ, կարգազանցը ստիպված եղավ 1 ֆունտ մեղրամոմ տալ եկեղեցուն: 1826թ. Գրիգոր Կարապետը և Հովսեփ Կամենցին եկեղեցում ծիծաղեցին, ապա դուրս եկան և իրենց դիտողություն անողի հետ խոսքակովի բռնվեցին. դրա համար նրանք 1 ֆունտ մեղրամոմ վճարեցին եկեղեցուն ու 2 օր բանտ նստեցին՝ կերակրվելով միայն հաց ու ջրով:

Վաճառականների եղբայրությունը, որն անգամ իր սեփական, թանկարժեք դրոշմ ուներ, Գերլան ղեկավարեց 168 տարի: Նրա վարքականոնային գործունեությունը ներթոմված էր քրիստոնեական արժեքներով, և պատահական չէ, որ քաղաքին հղված մի ուղերձում եղբայրությունը գրում էր. *«Համոզված ենք, թե քրիստոնեական ջերմեռանդությունը, որ վաղեմի ժամանակներից մեր քաղաքում անչափ ծաղկեց, օգնեց մեր նախնիներին իրենց առևտրի մեջ»*<sup>1</sup>:

Այժմ տեղափոխվելնք Ռուսաստան՝ Աստրախան: Ընդգծենք, որ ստորև շարադրված փաստերը, տվյալները, անուն-ազգանունները վերաբերում են բացառապես հայ վաճառականությանը:

Աստրախանում և նրա շրջանում հայերը բնակություն են հաստատել դեռևս X-XIդդ.: 1556թ. Ռուսաստանը թաթարներից նվաճեց Կասպից ծովի ափին գտնվող այդ նավահանգստային բնակավայրը, իսկ XVIIդ. 60-ական թթ. հայերն *«իրենց թվաքանակով գերազանցում էին ռուսներին»*<sup>2</sup>: Եթե

<sup>1</sup> Ավելի մանրամասն տե՛ս *Գովրիկեան Գ.*, Դրանսիրականիոյ հայոց մետրապոլիսը կամ նկարագիր Կերլայ հայաքաղաքի, Վիեննա, 1896:

<sup>2</sup> *Рыбушкин М.*, Записи об Астрахани, М., 1841, с. 24.

1618թ. այստեղ բնակվում էին ընդամենը 11 հայ, ապա XVIIIդ. սկզբին՝ 40 ընտանիք (մոտ 200 մարդ), իսկ նույն դարի կեսերին՝ արդեն շուրջ 2000 հոգի: Հայոց ներկայությունը գուտ առևտրատնտեսական էր, և առաջնությունն, անշուշտ, պատկանում էր նորջուղայեցիներին: Ձգտելով պարսկական հում մետաքսի իրացման համար նոր շուկաներ գտնել՝ նրանք ցամաքային ճանապարհով Նոր Ջուղայից հասնում էին ծովափ, ապրանքները բարձում նավերը և մեկնարկելով ներկայիս Էնգելի նավահանգստից՝ հասնում Աստրախան: Այստեղ նրանք հանգիստ էին առնում, կարգի բերում իրենց գործերը, ռուսական իշխանություններին վճարում մաքսեր ու տուրքեր, և «արևելյան ապրանքն» իր շահութաբեր ճանապարհը շարունակում էր դեպի Մոսկվա, Արխանգելսկ, Նովոռոդ, ընդհուպ մինչև Շվեդիա: Ըստ էության, հայոց համար Աստրախանը դարձավ ապրանքների կուտակման, վերաբարձման մի կետ (*перевалочная база*), և, բնականաբար, դա հանգեցրեց այն բանին, որ վաճառականների մի մասը մշտական բնակություն հաստատեց (ի դեպ, հենց նրանք 1640թ. կառուցեցին հայոց առաջին, փայտաշեն եկեղեցին):

Հայերից բացի, Աստրախանում բնակվում էին հնդիկներ, բուխարացիներ, գիլանցիներ, ագրիժանցիներ, թաթարներ և, իհարկե, ռուսներ: Սակայն հայոց դերակատարությունն առանձնահատուկ էր. երկու երկրների՝ Ռուսաստանի ու Պարսկաստանի միջև առևտրատնտեսական հարաբերությունների հաստատումը կատարվեց հայերի միջոցով: Եվ դա ուներ օբյեկտիվ պատճառներ. Պարսկաստանի բարքերին ու սովորույթներին անծանոթ ռուս վաճառականը լիակատար ձախողում էր կրում, իսկ մահմեդական պարսիկ վաճառականն առհասարակ մուտք չունեի քրիստոնյա Ռուսաստան: Ահա այս պայմաններում միջնորդական առաքելություն ստանձնեց քրիստոնյա, բայց պարսկահպատակ հայը: Սակայն դա գուտ միջնորդական գործունեություն չէր՝ այսօրվա պատկերացումներին համապատասխան, դա երկու երկրների միջև առևտրի **իրականացում** էր: Դա հայերին գերակայություն տվեց, և համախմբվելով ընդհանուր տնտեսական շահի գաղափարի շուրջ՝ հայ վաճառականությունն ամրապնդեց ու զարգացրեց այն: Դրան նպաստեց նաև այն հանգամանքը, որ Ալեքսեյ Միխայլովիչ ցարը և ռուսական գահի նրա հետնորդները, առաջնորդվելով սեփական երկրի շահերով, ըստ ամենայնի պետականորեն աջակցեցին ու հովանավորեցին հայերին:

1744թ. փետրվարի 29-ին Սենատը կայացրեց մի որոշում, որով Աստրախանում բնակվող օտարերկրացիներին և այլադավաններին հնարավորություն էր տալիս դատ ու դատաստան վարել իրենց օրենքների ու հին սովորույթների համաձայն և ունենալ կրոնական դավանանքի ազատություն:

Այս շնորհից լավագույնս օգտվեցին հայերը, որոնք մեկ քաղաքի՝ Աստրախանի սահմաններում ստեղծեցին յուրատեսակ ինքնավարություն: Դրա համար անհրաժեշտ էր ունենալ հայոց գործերը տնօրինող մի մարմին, որը կառաջնորդվեր սեփական իրավաբանական փաստաթղթով: 1747թ. սկզբից այդպիսի մարմին դարձավ **Հայկական ռատսհաուզը** (1765թ. կեսերից՝ Հայկական իրավարան, ռուսական պաշտոնական գրություններում՝ *Астраханский особый армянский суд* կամ *Астраханский армянский суд*), որի գործունեությունը հիմնված էր Հայոց դատաստանագրքի<sup>1</sup> վրա:

Դա բացառիկ, վերին աստիճանի արժեքավոր մի օրենսդրական փաստաթուղթ էր, որի հեղինակներն էին աստրախանցի վաճառականներ, կիրթ և ուսյալ երեք անձինք՝ Օհանի որդի Սարգիսը, Եղիազար Գրիգորյանը, Գրիգոր Կամպանյանը:

Աստրախանի հայոց դատաստանագիրքն օրենքի ուժով կարգավորում էր համայնքի քրեաիրավական, տնտեսական, վարքականոնային բոլոր հարցերը, համայնքի և պետության իրավահարաբերությունները:

Դատաստանագրքի լեզուն գրաբարի, Նոր Ջուղայի բարբառի և ռուսերեն բառերի համադրություն է: Այն ունի 1135 հոդված, որից 940-ը մտնում են առաջին, 107-ը՝ երկրորդ, 88-ը՝ երրորդ մասերի մեջ: Հեղինակներն օգտվել էին Հուստինիանոսի դատաստանագրքից (VIդ.), դրանից ծագած օրենքների համանման ժողովածուներից, ռուսական օրենքներից և, անշուշտ, **հայկական հին սովորության իրավունքի** խորհրդանիշ Մխիթար Գոշի Դատաստանագրքից:

Մենք այստեղ չենք անդրադառնա քրեական իրավունքին վերաբերող ավելի քան 300 հոդվածներին, այլ հպանցիկ հայացք կնետենք տնտեսական իրավահարաբերությունները կարգավորող 214 հոդվածների վրա, որոնք ամփոփված են Ա մասի «Վասն վաճառականութեան», «Վասն վաճառակալութեան կարգաց», «Վասն բարաթի» գլուխներում:

Հեղինակներն իրենք լինելով նորջուղայեցիներ՝ տնտեսական իրավանորմերի հիմքում դրել են պարսկահայոց սովորության իրավունքը՝ դա պատճառաբանելով այն հանգամանքով, որ Օսմանյան կայսրության հայերը *«են միամիտք և առանց իրաւանց և կանոնաց, իսկ բնակեալքն յերկրին պարսից ունեն զվաճառականութեան կարգս և կանօնս»*: Դա տրամաբանական էր նաև այն պատճառով, որ, ինչպես վերևում նշեցինք, Աստրախանի հայոց բացարձակ մեծամասնությունը նորջուղայեցիներ էին:

Տնտեսական բնույթի հոդվածները վերաբերում են առևտրի ձևերին, վաճառականությանը, առևտրական ընկերություններին և դրանց անդամների փոխհարաբերություններին: Տրվում են առք ու վաճառքի բոլոր ձևերը,

<sup>1</sup> Պահվում է Մատենադարանում՝ 7383 համարի տակ:

վաճառականության կարգը, առևտրական ընկերությունների միավորման սկզբունքները, վաճառողների ու գնորդների փոխառնչությունները, նրանց իրավունքներն ու պարտականությունները միմյանց հանդեպ: Ուշագրավ է նաև այն, որ Նոր Ջուղայում սովորական համարվող աղա-ընկեր փոխհարաբերությունները հեղինակները նույնությամբ փոխադրել էին դատաստանագրքի մեջ և դրանց տվել օրենքի ուժ:

Այսպես, դատաստանագրքի հեղինակները փողը տոկոսով տալը համարել են անօրինականություն, մի երևույթ, որն արգելված է Աստվածային և քաղաքական օրենքներով, սակայն համարելով, որ դա ընդունված սովորություն է՝ նրանք ստիպված ոչ թե արգելում, այլ սահմանում են տոկոսադրույքի չափը՝ ամսական 0,5%-ից ոչ ավելի:

Մանրակրկիտ կերպով սահմանվել են տնտեսական հանցագործությունների՝ թերաչափելու, թերակշռելու, առևտրի կանոնները խախտելու, արգելված արհեստներով զբաղվելու և այլնի համար պատժաչափերը:

Մեծ տեղ է հատկացված պայմանագրին, անգամ՝ բանավոր պայմանավորվածությանը: Ըստ դատաստանագրքի, կողմերից ոչ մեկը չի կարող հրաժարվել պայմանից, դա հնարավոր է միայն այն դեպքում, երբ երկու կողմերն էլ համաձայն են, կամ եթե պայմանավորված ժամկետն անցել է: Եթե գնորդը կանխավճար է տալիս, բայց հետո չի գնում ապրանքը, ապա զրկվում է կանխավճարը հետ ստանալուց, իսկ եթե ապրանքատերն է հրաժարվում վաճառել՝ պետք է կանխավճարը վերադարձնի կրկնակի չափով:

Դատաստանագրքում խոսվում է նաև առևտրային ընկերությունների մասին, երբ մի քանի հոգի միավորում են իրենց դրամագլուխները, կնքում պայմանագիր և գործում համաձայն դրա: Նման դեպքում եկամուտը կամ վնասը ընկերության անդամների վրա բաշխվում է համամասնորեն՝ ըստ նրանց ներդրած դրամագլխի: Եթե անդամներից որևէ մեկի անբարեխիղճ աշխատանքի պատճառով ընկերությանը վնաս է հասցվում, ապա վնասի հատուցումն ամբողջովին ստանձնում է զանցառուն: Եթե ընկերության անդամներից որևէ մեկը խաբում է գործընկերներին կամ բռնվում գողության մեջ, նրան տրվում է խիստ պատիժ, իսկ եթե ընկերության անդամի գողության մասին նրա գործընկերը ոչ միայն տեղեկացած է լինում, այլև գողացած ապրանքը բաժանում է մյուսների հետ, ապա պատժվում են բոլոր անդամները հավասարապես:

Ի վերջո, դատաստանագրքում կար մի զարմանալի և նույնիսկ զավեշտալի հոդված: Խստորեն դատապարտվում, արգելվում էր ինքնասպանությունը. նման փորձ կատարողին, մտադրությունն իրագործելու պահին

բռնելու դեպքում, պետք էր դատել ու ենթարկել մահապատժի...<sup>1</sup>:

Ամփոփելով և համադրելով տարբեր ժամանակներում ու տարբեր երկրներում հայ վաճառականի վարքականոնային այլազան դրսևորումներ և՛ մենք հանգում ենք մեկ եզրակացության. մեր վաճառականությունը որդեգրել և հավատարիմ է մնացել քրիստոնեական բարոյականության արժեքներին, առաջնորդվել խղճի մտքը, պարկեշտությամբ, ազնվությամբ, և դա օգտաշատ է եղել ոչ միայն նրա համար, այլև նրա միջոցով ազգը դարեր շարունակ պահպանել է իր գոյությունը:

Ո՞րն է այս ամենի արդիականությունը: Հայաստանի Երրորդ Հանրապետության գործարարը պիտի յուրացնի համաշխարհային գործարարության խաղի կանոնները, պիտի ներգրավվի միջազգային տնտեսական գործընթացներին, սակայն իր ուսերին պիտի տանի նախնյաց հազարամյա անգնահատելի փորձառությունը: Այլապես կդառնա օտարերկրյա տնտեսական էքսպանսիայի կամակատար գործիք, իսկ դա, ինչպես հայտնի է, հանգեցնում է քաղաքական տխուր հետևանքների:

<sup>1</sup> Ավելի մանրամասն տե՛ս «Դատաստանագիրք Աստրախանի հայոց» (Ֆ.Պողոսյանի աշխատասիրությամբ), Ե., 1967: